

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ ներգրավելու մասին

<< 04>> 09. 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՋԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնի ավագ քննիչ Ա.Շուքուրյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 92250518 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

10.09.2015թ. ՀՀ քննչական կոմիտեի գինվորական քննչական գլխավոր վարչության չորրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հարուցված թիվ 92250515 քրեական գործով կատարված նախաքննությամբ պարզվել է, որ 06.06.1997թ. ծնված Արման Արմենի Արագածունին 26.08.2014թ. հաշվառվել է ՀՀ գինվորական կոմիսարիատում և Ջինապարտության մասին ՀՀ օրենքի պահանջների համաձայն ենթակա է եղել զորակոչման 2015թ. ամառային զորակոչին, սակայն չի ներկայացել գինկոմիսարիատ և խուսափել է ժամկետային գինվորական կամ այլընտրանքային ծառայության՝ 2015թ.-ի ամառային զորակոչին՝ այդ ծառայությունից ազատվելու՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հիմքերի բացակայության դեպքում:

Դեպքի առթիվ 10.09.2015թ ՀՀ ՔԿ ՋԲԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 92250515 քրեական գործը:

04.09.2018թ. ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի վարչության Քանաքեռ-Զեյթունի բաժնից գրություն է ստացվել այն մասին, որ ներկայացվում է ՀՀ քրեական օրենսգրքի 327-րդ հոդվածի 1-ին մասով հետախուզվող Արման Արմենի Արագածունի /ծնված 06.06.1997թ. հաշվ. Ուզբեկստան, ք.Տաշկենտ, Սեգելի 3փ. 332. բն.80/ :

Նկատի ունենալով, որ քրեական գործով անհրաժեշտ է քննչական և դատավարական գործողություններ կատարել գործով մեղադրյալ Արման Արմենի Արագածունի հետ, ով չի տիրապետում հայերեն գրավոր և բանավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է ներգրավել ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին տիրապետող թարգմանիչ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթումս քննվող թիվ 92250515 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<ՎԻ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեփանյանին (ՍՊԸ պետական ռեգիստրի վկայական թիվ 03Ա895651, տրված 17.12.2012թ., գրանցման համար՝ 42.110.745651), որին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածը և նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Ավագ քննիչ



Ա.Շուրուրյան

Սույն որոշումն ինձ հայտնվել է <<04>> սեպտեմբերի 2018 թ.-ին:

Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար << քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են << քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանչի իմ պարտականություններն ու իրավունքները:

Թարգմանիչ՝



2. Արտեմյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

Ավագ քննիչ



Ա.Շուրուրյան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՁԻՆՎՈՐԱԿԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՉՈՐՐՈՐԴ ԿԱՅԱԶՈՐԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

N 92250515-16

0037, ք.Երևան, Բարսեղյանի փող. 6
հեռ., ֆաքս 20-02-14

«04» 09 2018թ.

ՏԵՂԵԿԱԼՔ

Տրվում է առ այն, որ վարույթումն քննվող թիվ 92250515 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված, ՎԻ ԳՐՈՒՊ ՍՊԸ տնօրեն՝ թարգմանիչ Հմայակ Մանվելի Ստեփանյանը սույն թվականի սեպտեմբերի 4-ին կատարել է 3 ժամ տևողությամբ բանավոր թարգմանություն՝ հայերենից ռուսերեն և հակառակը:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ, երկրորդ դասի
խորհրդական

Ա.ՇՈՒՔՈՒՐՅԱՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

ք. Երևան

29 դեկտեմբերի, 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Թ.Հ.Գրիգորյանս, վերանայելով թիվ 16883518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ-ի դեկտեմբերի 13-ին ժամը, 16:50-ին «Հետախուզում-2018» օպերատիվ կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ՀՀ ԵՔՎ ՔՀԲ-ում ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, ոստիկանության ԵՔՎ ՔՀԲ և ոստիկանության Մալաթիայի բաժնի ՔՀԲ ծառայողները համատեղ, ապօրինի թմրամիջոցներ պահելու և ապօրինի հրազեն կրելու կասկածանքով, Երևան քաղաքի Սեբաստիա և Ա. Վեգներ փողոցների խաչմերուկից «Օպել-Ջաֆիրա» մակնիշի 28 AS 288 հ/համարանիշի ավտոմեքենայով ոստիկանության Մալաթիայի բաժնի բերման են ենթարկել՝ Ասատուր Արամայիսի Սևանյանին, Էդգար Գագիկի Ամբակումյանին, որի մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեկ հատ բժշկական կաթուղի՝ շագանակագույն հետքերով, և Արամ Աշոտի Աղաբաբյանին, վերջինիս մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեկ հատ բժշկական ներարկիչ՝ լցոնված մոտ՝ 1մլ.քանակի՝ սպիտակավուն հեղուկով՝ նմանվող «քացախաթթվի անհիդրիդ», մեկ հատ պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ հայտնաբերվել է մոտ 0.03 գրամ քաշով սև գույնի զանգված՝ նմանվող՝ «ափիոն» տեսակի թմրամիջոցի, գաղտնի փականով դանակ՝ շեղբի երկարությունը մոտ 10 սմ, և 9մմ տրամաչափի NH 5243 գործարանային համարի «Մակարով» տեսակի ատրճանակ իր փամփուշտատուփով՝ լիցքավորված 5 հատ փամփուշտներով:

Համաձայն դատաձգաբանական փորձաքննության եզրակացության՝ ներկայացված ատրճանակը հանդիսանում է 1966 թվականի արտադրության ԽՍՀՄ գործարանային արտադրության Մակարով տեսակի, NH 5243 համարի 9 մմ տրամաչափի ակոսափող ատրճանակ, սարքին է, պիտանի է կրակոցներ կատարելու համար և հանդիսանում է ակոսափող հրազեն: Փամփուշտները պիտանի են կրակվելու համար և հանդիսանում են ռազմամքերք:

Դեպքի առթիվ 13.12.2018թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16883518 քրեական գործը, որը նույն օրը ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ ՔՎ ԵՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի, որտեղ այն ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում վկա Էդուարդ Գիագիկի Ամբակումյանը հայտարարել է, որ տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն հայերեն գրավոր լեզվին բավարար չափով չի տիրապետում՝ դժվարանում է կարդալ ու գրել, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 16883518 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Տաթևիկ Գուգարքի Քոչարյանին (անձնագիր AR0516452, տրված 20.11.2017թ-ին 013-ի կողմից, հաշվառված է և բնակվում է Երևան քաղաքի Դավիթաշեն 2-րդ թաղ. 15-րդ շենքի 30-րդ բնակարանում, աշխատում է «Վի գրուպ» ՍՊԸ-ում, որպես թարգմանիչ), ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չշահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Տաթևիկ Քոչարյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

Ավագ քննիչ

Թ. Հ. Գրիգորյան

Թարգմանիչ

Տ. Գ. Քոչարյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է 2018 թվականի դեկտեմբերի 29-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ

Տ. Գ. Քոչարյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց.

Ավագ քննիչ

Թ. Հ. Գրիգորյան

Տեղեկանք

ք.Երևան

29.12.2018թ.

Տրվում է <<Վի Գրուպ>> ՄՊԸ-ի թարգմանիչ Տաթևիկ Քոչարյանին առ այն, որ նա Մալաթիա-Սերաստիա վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 16883518 քրեական գործով ներգրավվել է վարույթին որպես թարգմանիչ և կատարել է 2 ժամ բանավոր և 6 թերթ գրավոր թարգմանություն:

Ավագ քննիչ



Թ.Հ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

թարգմանիչ հրավիրելու մասին

ք. Երևան

13 դեկտեմբերի, 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Թ.Հ.Գրիգորյանս, վերանայելով թիվ 16883518 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ-ի դեկտեմբերի 13-ին ժամը, 16:50-ին «Վետախուզում-2018» օպերատիվ կանխարգելիչ միջոցառման շրջանակներում ՀՀ ԵՔՎ ՔՀԲ-ում ստացված օպերատիվ տեղեկություններն իրացնելիս, ոստիկանության ԵՔՎ ՔՀԲ և ոստիկանության Մալաթիայի բաժնի ՔՀԲ ծառայողները համատեղ, ապօրինի թմրամիջոցներ պահելու և ապօրինի հրազեն կրելու կասկածանքով, Երևան քաղաքի Սեբաստիա և Ա. Վեգներ փողոցների խաչմերուկից «Օպել-Ջաֆիրա» մակնիշի 28 AS 288 հ/համարանիշի ավտոմեքենայով ոստիկանության Մալաթիայի բաժնի բերման են ենթարկել՝ Ասատուր Արամայիսի Սևանյանին, Էդգար Գագիկի Ամբակումյանին, որի մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեկ հատ բժշկական կաթուցիչ՝ շագանակագույն հետքերով, և Արամ Աշոտի Աղաբաբյանին, վերջինիս մոտից անձնական խուզարկությամբ հայտնաբերվել է մեկ հատ բժշկական ներարկիչ՝ լցունված մոտ՝ 1մլ.քանակի սպիտակավուն հեղուկով՝ նմանվող «քացախաթթվի անհիդրիդ», մեկ հատ պոլիէթիլենային փաթեթ, որի մեջ հայտնաբերվել է մոտ 0.03 գրամ քաշով սև գույնի զանգված՝ նմանվող՝ «ափիոն» տեսակի թմրամիջոցի, գաղտնի փականով դանակ՝ շեղբի երկարությունը մոտ 10 սմ, և 9մմ տրամաչափի NH 5243 գործարանային համարի «Մակարով» տեսակի ատրճանակ իր փամփուշտատուփով՝ լիցքավորված 5 հատ փամփուշտներով:

Համաձայն դատաձգաբանական փորձաքննության եզրակացության՝ ներկայացված ատրճանակը հանդիսանում է 1966 թվականի արտադրության ԽՍՀՄ գործարանային արտադրության Մակարով տեսակի, NH 5243 համարի 9 մմ տրամաչափի ակոսափող ատրճանակ, սարքին է պիտանի է կրակոցներ կատարելու համար և հանդիսանում է ակոսափող հրազեն: Փամփուշտները պիտանի են կրակվելու համար և հանդիսանում են ռազմամքերը:

Դեպքի առթիվ 13.12.2018թ. ՀՀ ոստիկանության Մալաթիայի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 235-րդ հոդվածի 1-ին մասի հատկանիշներով հարուցվել է թիվ 16883518 քրեական գործը, որը նույն օրը ենթակայության կարգով ուղարկվել է ՀՀ ՔՎ ԵՔՎ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի, որտեղ այն ընդունվել է վարույթ և կատարվում է նախաքննություն:

Նախաքննության ընթացքում վկա Էդուարդ Գիագիկի Ամբակումյանը հայտարարել է, որ տիրապետում է հայերեն բանավոր լեզվին, սակայն հայերեն գրավոր լեզվին բավարար չափով չի տիրապետում՝ դժվարսունում է կարդալ ու գրել, սակայն ազատորեն տիրապետում է ռուսերեն գրավոր և բանավոր լեզվին, ուստի անհրաժեշտ է հնարավորություն ընձեռնել նրան թարգմանիչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 16883518 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արինե Հայկի Հարությունյանին (անձնագիր AN0745803, տրված 09.12.2013թ-ին 001-ի կողմից, հաշվառված է Կապան քաղաքի Լեռնագործների փողոցի թիվ 1 շենքի թիվ 13 բնակարանում, բնակվում է Երևան քաղաքի Սևաստոպոլյան փողոցի թիվ 20/2 տանը, աշխատում է «Վի գրուպ» ՍՊԸ-ում, որպես թարգմանիչ), ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, վերջինս գործով չչահագրգռված անձ է:

2. Թարգմանիչ Արինե Հարությունյանին պարզաբանել նրա պարտականություններն ու իրավունքներն և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության վերաբերյալ:

Ավագ քննիչ

Թ. Հ. Գրիգորյան

Թարգմանիչ

Ա. Հ. Հարությունյան

Սույն որոշումը ինձ հայտնվել է 2018 թվականի դեկտեմբերի 13-ին: Ես նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին: Միաժամանակ ինձ պարզաբանվել են ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով սահմանված թարգմանիչի պարտականությունները և իրավունքները:

Թարգմանիչ

Ա. Հ. Հարությունյան

Որոշումը հայտնեց, իրավունքներն ու պարտականությունները պարզաբանեց, պատասխանատվության մասին նախազգուշացրեց:

Ավագ քննիչ

Թ. Հ. Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Երևան

14.12.2018թ.

Տրվում է «Վի գրուպ» ՍՊԸ-ի աշխատակից Արինե Հայկի Հարությունյանին, առ այն, որ նա մասնակցել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնուն քննված թիվ 16883518 քրեական գործով որպես ռուսերեն լեզվի թարգմանիչ և կատարել է ընդհանուր 4 ժամ 35 րոպե բանավոր թարգմանություն:

Մալաթիա-Սեբաստիա վարչական
շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ




Թ.Հ.Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ՔԿ Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ Թ.Մարգարյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ թիվ 16883518 քրեական գործով Վի Գրուպ ՍՊԸ ռուսերեն լեզվի թարգմանիչ Արինե Հարությունյանը 14.12.2018թ. կատարել է ընդհանուր 5 ժամ 8 րոպե բանավոր թարգմանություն:

**Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ**



Թ. Գրիգորյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

13 11 2018թ

ք. Արովյան

«Վ Կարապետյան» վերանայելով վարույթիս թիվ 20189218 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Ձ Ե Ց Ի

2018թ-ի հուլիսի 19-ին ժամը 17:20-ին կոտայքի մարզի Գեղադիր գյուղի բնակիչ Արման Եղնիկի Մարտիրոսյանը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ սպառնալիքներ է հնչեցրել իր հարևան Արթուր Կալեսատովի հասցեին, որն Ա.Կալեսատովի կողմից ընդունվել է իրական:

Ղեկավարելով «Ն» ոստիկանության Կոտայքի բաժնում 30.07.2018թ-ին «Վ» քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20189218 քրեական գործը, որը 03.08.2018թ-ին ստացվել է Արովյանի բննչական բաժնում և նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ և նույն օրը ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Արթուր Կալեսատովը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին:

Նկատի ունենալով, որ նրա մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերագրյալից և Ղեկավարվելով «Վ» քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Սույն քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ընկերության թարգմանիչ Վիոլետա Ալեքսանդրի Խաչատուրովան, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2. Թարգմանին ծանոթացնել և պարզաբանել «Քր. դատ. օր-ի 83 հոդ. նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար «Քր. օր-ի 338 հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին»:

ՔՆՆԻՉ

«Վ Կարապետյան»

Որոշմանը ծանոթացել են, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել են ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգման

27.11.2018թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Արուսյան

ՀՀ քննչական կոմիտեի Արուսյանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Կարապետյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 20189218 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Վիդեյրա Խաչատրյանի կատարել է ռուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն՝ 3 ժամ տևողությամբ:

Քննիչ՝

Հ.Կարապետյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

27.11.2018թ.

ք. Արուսյան

ՀՀ ՔԿ Արուսյանի քննչական բաժնի քննիչ Հ.Կարապետյանս, վերանայելով վարույթիս թիվ 20189218 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

2018թ-ի հուլիսի 19-ին ժամը 17:20-ին կոտայքի մարզի Գեղադիր գյուղի բնակիչ Արման Եղնիկի Մարտիրոսյանը կենցաղային հարցերի շուրջ վիճաբանության ժամանակ սպառնալիքներ է հնչեցրել իր հարևան Արթուր Կալեսատովի հասցեին, որն Ա.Կալեսատովի կողմից ընդունվել է իրական:

Դեպքի առթիվ ՀՀ ոստիկանության Կոտայքի բաժնում 30.07.2018թ-ին ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 20189218 քրեական գործը, որը 03.08.2018թ-ին ստացվել է Արուսյանի քննչական բաժնում և նախաքննության կատարումը հանձնարարվել է ինձ և նույն օրը ընդունվել է վարույթ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ տուժող Արթուր Կալեսատովը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, այլ տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին,

Նկատի ունենալով, որ նրա մասնակցությամբ անհրաժեշտ է կատարել դատավարական գործողություններ, որի համար անհրաժեշտ է գործին թարգման ներգրավել, ուստի ելնելով վերոգրյալից և Ղեկավարվելով ՀՀ քր. դատ. օր-ի 15 և 83 հոդվածների պահանջներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1.Սույն քրեական գործով թարգմանիչ ներգրավել «Վի Գրուպ» ընկերության թարգմանիչ Քոչարյան Տաթևիկ Գուգարքի, ով հավասարապես տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին:

2.Թարգմանին ծանոթացնել և պարզաբանել ՀՀ քր. դատ. օր-ի 83 հոդ. նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները, միաժամանակ նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քր. օր-ի 338 հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին:


ՔՆՆԻՉ



Հ.Կարապետյան

Որոշմանը ծանոթացել եմ, իմ իրավունքներն ու պարտականությունները բացատրվել են, նախազգուշացվել եմ ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Թարգման



ՏԵՂԵԿԱՆՔ

ք. Արուսյան

ՀՀ քննչական կոմիտեի Արուսյանի քննչական բաժնի քննիչ՝ Հ.Կարապետյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննվող թիվ 20189218 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ՝ Տաթևիկ Քոչարյանը կատարել է ոռւտերենից հայերեն և հակառակը բանավոր և գրավոր թարգմանություն՝ 1 ժամ 20 րոպե տևողությամբ:

Քննիչ՝



Հ.Կարապետյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Քրեական գործով թարգմանիչ ներգրավելու մասին

12.06.2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնի քննիչ, արդարադատության մայր Ռ.Խաչատրյանս, վերանայելով թիվ 61205817 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

2017 թվականի հունիսի 23-ին, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ,, բժշկական կենտրոնից ՀՀ ոստիկանություն Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում ահազանգ է ստացվել այն մասին, որ շտապօգնության 01 բրիգադի կողմից Երևան քաղաքի Արամի 42 հասցեից ,, Պոլիտրավմա,, ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության է տեղափոխվել Աշոտ Վազգենի Բադալյանը և ըստ հիվանդի՝ վնասվածքները ստացել է աշխատավայրում:

Ահազանգի հիման վրա ՀՀ ոստիկանությունում Կենտրոնական բաժնում նախապատրաստվել են նյութեր:

2017թ. հունիսի 27-ին՝ ժամը 06:00-ին, ,, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ,, բժշկական կենտրոնից ՀՀ ոստիկանություն Երևան քաղաքի վարչության Կենտրոնական բաժնում ահազանգ է ստացվել այն մասին որ 2017թ. հունիսի 23-ին ,,Պոլիտրավմա,, ախտորոշմամբ իրենց մոտ բուժօգնության տեղափոխված Աշոտ Վազգենի Բադալյանը գիտակցության չգալով, ժամը 04:30-ին մահացել է:

2017թ. հուլիսի 24-ին վարույթ իրականացնող մարմնի կողմից որոշում է կայացվել նախապատրաստված նյութերով քրեական գործ հարուցելը մերժելու մասին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով:

2017թ. հոկտեմբերի 18-ին Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի կողմից որոշում է կայացվել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը վերացնելու և ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածի 2-րդ մասի 14-րդ կետով թիվ 61205817 քրեական գործ հարուցելու մասին:

25.10.2017թ նախաքննություն իրականացնելու համար թիվ 61205817 քրեական գործն ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի ՔՎ Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ քրեական գործով վկա Վլադիմիր Գեորգիի Հայրապետով չի տիրապետում հայերեն լեզվին, տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դատավարությունն իրականացվում է հայերեն լեզվով, անհրաժեշտություն է առաջացել սույն քրեական գործով վարույթին ներգրավել 'Վի Գրուպ' ՍՊԸ-ն թարգմանիչ Վահագն Մերուժանի Ղազարյանին, Հ. Հայրապետովի մասնակցությամբ կատարվելիք քննչական գործողություններին մասնակցելու համար:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Թիվ 61205817 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել Վի Գրուպ՝ ՍՊԸ-ն, թարգմանիչ Վահագն Մերուժանի Ղազարյանին:

2. Վահագն Մերուժանի Ղազարյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանչի իրավունքներն ու պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ԱՎԱԳ ՔՆՆԻՉ՝



Ռ. Խաչատրյան

Ծանոթացա թարգմանչի իրավունքներին և պարտականություններին, նախազգուշացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Թարգման




Վ. Ղազարյանին

՝ 12 ' 06 2018թ.

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Երևան քաղաք
Լենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների քննչական բաժնում քննված թիվ 612058
րեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Վահագն Ղազարյա
րեական գործով վարույթին ներգրավվել է, որպես թարգման և կատարել է 2 ժ
այերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Ավագ քննիչ



Ռ. Գ. Խաչատրյան

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Թարգմանիչ հրավիրելու մասին

15-ը օգոստոսի, 2018թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության կոռուպցիոն, սեփականության դեմ ուղղված հանցագործությունների և կիբեռահանցագործությունների քննության վարչության ՀԿԳ ավագ քննիչ Վ.Հովհաննիսյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 69100918 քրեական գործի նյութերը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչությունում քննվում է թիվ 69100918 քրեական գործը՝ «Կոմայուտեր սերվիս», «Դյուրլանգ», «Զիգզագ» և «Մորայլ-Սենթր Արտ» ՍՊ ընկերություններից, Նարեկ Հովսեփյան և Սամվել Անտոնյան Ա/Ձ-ից խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով, «Ֆլեշ Մոտորս» ՍՊ ընկերությունից առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության փորձ կատարելու «Մենուա Ասոցացիա», «Պրոգրես Ագրո», «Էֆֆեկտ Գրուպ», «ԼԻԱ-Կ ԳՐՈՒՊ» և «Վուդ Լայն» ՍՊ ընկերություններից և Ռաֆայել Թադևոսյանից խոշոր չափերով գույքի հափշտակություն կատարելու, «Մոսէսկո» ՍՊ ընկերությունից խոշոր չափերով գույքի հափշտակության փորձ կատարելու, քննությամբ չպարզված անձանց կողմից «ՎՏԲ Հայաստան Բանկ» ՓԲ ընկերության Շենգավիթ մասնաճյուղի կեղծ փոխանցման օրդերներ և «Արդշիբանկ» ՓԲ ընկերության Աղասյան մասնաճյուղի կեղծ վճարման հանձնարարագրեր պատարաստելու և իրացնելու, «Արմտելեկոմ», «Պարմա», «Դարֆ», «Դե Լաուր» ՍՊ ընկերություններից խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով, «Նուշիկյան Ասոցիացիա», «ՍՊՍ Սիգարոն» ՍՊ ընկերություններից և Ա/Ձ Հմայակ Սնիսյանից քննությամբ դեռևս չպարզված անձանց հանցակցությամբ խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակության փորձ կատարելու, քննությամբ չպարզված անձանց կողմից ակնհայտ հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք ձեռք բերելու դեպքերի առթիվ:

Նախաքննության ընթացքում անհրաժեշտություն է առաջացել գործով որպես վկա հարցաքննելու ազգությամբ հայ Ռոզա Սամսոնի Ղուկասյանին, ով տիրապետում է ռուսերեն բանավոր ու գրավոր լեզվին, հայերեն գրավոր լեզվին չի տիրապետում:

Նկատի ունենալով, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածի համաձայն՝ քրեական դատավարությունը տարվում է հայերեն լեզվով, «Վի-Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից Արինե Հարությունյանն ազատ տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության 15-րդ, 55-րդ և 83-րդ հոդվածների պահանջներով.


Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Վարույթիս թիվ 69100918 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել «Վի-Գրուպ» ՍՊ ընկերության աշխատակից՝ Արինե Հայկի Հարությունյանին /ծնված 04.12.1954թ., անձնագիր՝ AN 0745803/:

2. Արինե Հարությունյանին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված թարգմանի հրավումքներն ու

պարտականությունները, ինչպես նաև նախագրուչացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

ՀԿԳ ավագ քննիչ՝



Վ. Հովհաննիսյան

Ծանոթացա թարգմանի իրավունքներին և պարտականություններին, նախագրուչացվել եմ ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

Սիսե 1 Վ. Կարաբաջյան

«15» 08 2018թ.

Տ Ե Ղ Ե Կ ան ք


30.05.2019թ.

ք. Երևան

ՀՀ քննչական կոմիտեի ՀԿԳ քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ Վ.Հովհաննիսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս քննվող թիվ 69100918 քրեական գործով «Վի Գրուպ» ՍՊ ընկերության տնօրեն Հ.Ստեփանյանի՝ 2018թ. օգոստոսի 15-ի լիազորագրի հիման վրա Արինե Հարությունյանը մասնակցել է վկայի հարցաքննությանը և իրականացրել է հայերենից ռուսերեն բանավոր թարգմանություն:

Հարցաքննությունը սկսվել է 2018թ. օգոստոսի 15-ին ժամը՝ 12:15-ին և ավարտվել է նույն օրը ժամը՝ 13:20-ին:

Ընդհանուր բնույթի և ընտրական հանցագործությունների քննության վարչության պետի տեղակալ՝



Վ.Հովհաննիսյան

Հեռ. /098/ 81-21-12

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
Թարգմանիչ հրավիրելու մասին

<<05>> դեկտեմբերի 2018թ.

ք. Արմավիր

« քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս վերանայելով վարույթումս քննվող թիվ **48173318** քրեական գործի նյութերը՝

Պ Ա Ր Չ Ե Ց Ի

2018թ. օգոստոսի 06-ին Արմավիր քաղաքի Մաշտոց փողոցի 3^ա շենքի 59-րդ բնակարանի բնակչուհի Գոհար Մեսրոպի Զալալյանը ոստիկանության Արմավիրի բաժնում հաղորդում է սվել այն մասին, որ նույն օրը՝ ժամը 18⁰⁰-ի սահմաններում, իրենց տանը կենցաղային հարցերի շուրջ ծագած վիճաբանության ժամանակ իր ամուսնու նախկին կին Արաքսիա Ալեքսանդրի Հովհաննիսյանը ձեռքերով 2-3 անգամ հարվածել է իր մարմնի տարբեր մասերին, քաշել մազերից, ճանկոել երեսը՝ պատճառելով ֆիզիկական ցավ և մարմնական վնասվածք:

Համաձայն դատաբժշկական փորձագետի թիվ 218 եզրակացության՝ Գոհար Մեսրոպի Զալալյանի ստացած մարմնական վնասվածքները՝ աջ և ձախ ստորակնակապճային, աջ ազդրի շրջանների քերծվածքների ձևով, պատճառվել են բուֆ առարկաներով, հնարավոր է որոշման մեջ նշված ժամկետում և հանգամանքներում, որոնք առողջությանը թեթև վնասի հատկանիշներ չեն պարունակում:

Դեպքի առթիվ «Ոստիկանության Արմավիրի բաժնում 31.08.2018թ. «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածի հատկանիշներով հարուցվել է թիվ **48173318** քրեական գործը և այն ուղարկվել է «քննչական կոմիտեի Արմավիրի մարզային քննչական վարչություն:

12.09.2018թ. Արաքսիա Ալեքսանդրի Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել «Քրեական օրենսգրքի 118-րդ հոդվածով:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ մեղադրյալ Արաքսիա Հովհաննիսյանը չի տիրապետում «քրեական դատավարության լեզվին:

Պարզվել է նաև, որ մեղադրյալ Արաքսիա Հովհաննիսյանը տիրապետում է ռուսերեն լեզվին:

12.09.2018թ. որոշում է կայացվել թիվ 48173318 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արինե Հայկի Հարությունյանին, ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, և գործով չջահագրգռված անձ է:

05.12.2018թ. «Կի Գրուպ» ՍՊ ընկերությունից գրություն է ստացվել այն մասին, որ ընկերության աշխատակից Արինե Հայկի Հարությունյանն առողջական վիճակից ելնելով՝ չի կարող ներկայանալ թարգմանիչ մասնակցությամբ նախատեսվող քննչական գործողությանը,

ինչի պատճառով խնդրվել է գործով որպես թարգմանիչ ներգրավել Արմինե Մինասյանին:

Նկատի ունենալով, որ անհրաժեշտություն է առաջացել մեղադրյալ Արաքսիա Հովհաննիսյանին հնարավորություն ընձեռել թարգմանչի օգնությամբ իրականացնել քրեադատավարական օրենքով սահմանված իր իրավունքները, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 15-րդ հոդվածով, 55-րդ հոդվածի 4-րդ մասի 12-րդ կետով և 83-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

1. Թիվ 48173318 քրեական գործով որպես թարգմանիչ հրավիրել Արմինե Մինասյանին / ծնված 29.01.1986թ., հաշվառված՝ քաղաք Երևան, Վրացական 21/1 շենք, բնակարան՝ 1 հասցեում /, ով ազատորեն տիրապետում է հայերեն և ռուսերեն լեզուներին, ով գործով չչահագրգռված անձ է:
2. Որոշման մասին հայտնել թարգմանիչ Արմինե Մինասյանին, պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքներն ու պարտականությունները և նախազգուշացնել ակնհայտ սխալ թարգմանություն կատարելու համար ՀՀ քրեական օրենսգրքի 338-րդ հոդվածով նախատեսված քրեական պատասխանատվության մասին :

Հ Կ Գ Ք Ն Ն Ի Չ՝

Ք. Կ Ի Ր Ա Կ Ո Ս Յ Ա Ն

Թարգմանիչ՝

Ա. Հևոյ Բ. Միսաքյան


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

ք. Արմավիր

ՀՀ ՔԿ Արմավիրի մարզային քննչական վարչության ՀԿԳ քննիչ, արդարադատության 3-րդ դասի խորհրդական Բ.Կիրակոսյանս, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումն քննված թիվ 48173318 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված «Վի Գրուպ» ՍՊ ընկերության թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանը կատարել է հայերենից ռուսերեն և հակառակը բանավոր թարգմանություն 2 ժամ տևողությամբ:

Վարչության ՀԿԳ քննիչ,
արդարադատության երրորդ դասի
խորհրդական՝

հեռ. 077-11-08-78



Բ. Կ Ի ր ա կ ո ս յ ա ն

Զրույց
14 234 8/2

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
Թարգմանիչ ներգրավելու մասին

<<10>> մայիսի 2018թ.

ք. Երևան

«Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնի ավագ քննիչ, երկրորդ դասի խորհրդական՝ Ռ.Ջ.Մախմուդյանս, քննարկելով թիվ 09159818 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Էդուարդ Սերյոժայի Մուրադյանը խախտելով «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին» 2002թ. դեկտեմբերի 26-ի «Օրենքի և «Կառավարության 2010թ. մարտի 18-ի թիվ 270-Ն որոշման պահանջները, ապօրինի պատրաստել և իր մոտ պահել է զգալի չափի՝ 2.36 գրամ հաստատուն քաշով մարիխուանա տեսակի թմրամիջոց:

2018թ. ապրիլի 2-ին ժամը 19:20-ին «Նուստիկանության ԵՔՎ ՔՀԲ 3-րդ բաժանմունքի ծառայողները ստացված օպերատիվ տվյալներն ուստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնի ՔՀԲ ծառայողների հետ համատեղ իրացնելով՝ Ռուբինյանց և Պ.Սևակ փողոցների խաչմերուկից թմրամիջոց պահելու կասկածանքով ուստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժին են բերման ենթարկել Էդուարդ Սերյոժայի Մուրադյանին:

Անձնական խուզարկությամբ Է.Մուրադյանի մոտից հայտնաբերվել է 2.6 գրամ քաշով դեղնականաչավուն, չորացված, մանրացված զանգված:

Դատաքիմիական փորձաքննության թիվ 188 Բ-18 եզրակացության համաձայն՝ փորձաքննության ներկայացված 2.36 գրամ հաստատուն քաշով կանեփի բուսական մանրացված զանգվածը հանդիսանում է մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Դեպքի առթիվ «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում 09.04.2018թ. «Քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է թիվ 09159818 քրեական գործը:

10.04.2018թ. թիվ 09159818 քրեական գործը ստացվել է «Քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժին և քրեական գործի նախաքննությունը հանձնարարվել է ինձ:

Նախաքննության ընթացքում պարզվել է, որ կասկածյալ Էդուարդ Սերյոժայի Մուրադյանը չի տիրապետում հայերեն գրավոր լեզվին, նա ազատորեն տիրապետում է հայերեն բանավոր, ինչպես նաև ռուսերեն բանավոր և գրավոր լեզվին, ուստի ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածի պահանջներով.

Ո Ր Ո Շ Ե Ց Ի


1.Վարույթիս թիվ 09159818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավել <<Վի Գրուպ>> ՍՊ ընկերության աշխատակից՝ թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանին /անձնագիր AN 0213064, տրված 24.07.2012թ. 004-ի կողմից/, որին պարզաբանել << քրեական դատավարության օրենսգրքի 83 հոդվածով նախատեսված իր իրավունքները և պարտականությունները, ինչպես նաև նախազգուշացնել << քրեական օրենսգրքի 338 հոդվածով նախատեսված պատասխանատվության մասին:

**Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի
քննչական բաժնի ավագ քննիչ՝**



Ռ.Զ.Մախմուդյան

Որոշման հետ ծանոթացա, իմ իրավունքները
և պարտականությունները ինձ պարզաբանված են
Թարգմանիչ՝



<<Ս>> մայիսի 2018թ.


Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

« 31 » մայիսի 2018թ.

ք.Երևան

ՀՀ քննչական կոմիտեի Երևան քաղաքի քննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում քննվող թիվ 09159818 քրեական գործով <<Վիգրուպ>> ՍՊԸ-ի թարգմանիչ Արմինե Քաջիկի Մինասյանի կողմից նախաքննության ընթացքում կատարվել է 9 ժամ 45 րոպե ուսերենից հայերեն և հակառակը բանավոր թարգմանություն:

Քննչական բաժնի ավագ քննիչ՝




Ա.Ս.Հայրապետյան

aram-070@6k.ru

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ ԲԿ Երևան քաղաքի բննչական վարչության Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բննչական բաժնի ավագ բնիչ Ա. Ա. Հայրապետյան, կազմեցի սույն տեղեկանքն այն մասին, որ վարույթումս բնաված թիվ 09159818 քրեական գործով որպես թարգմանիչ ներգրավված "Վի Գրուպ" ՍՊ ընկերության թարգմանիչներ Արմինե Մինասյանը կատարել են հայերենից ռուսերեն գրավոր թարգմանություն 14234 թիշ:

Ավագ բնիչ



Ա. Ա. Հայրապետյան